



ՇԱՐԱԹԱՐԵՐ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Փրց Տարի, թիւ 28

ՀԱՐԱՄ

17 Յունիուս, 1898

Պատմաններ . — Ծաղիկի բաժանորդագիրն է Տարհելաց՝ Պոլ-
սոյ համար 40, Գաւառներու համար 50 դահ. : Ազգամանայ Պոլ-

սոյ համար 25, Գաւառաց համար 30 դահ. : Համար 33 Պոլ-

Բաժանորդագույքուրիւր թիւի վրայ է, տարհելաց բաժանորդագույքուր
տիւ տասնամ 52 եւ վեցամսեայները 26 թիւ Ծաղիկի բաժանորդա-

Գուառու թիւ յունձն կ'առ նէ հատուցանել բաժանորդներու պատման

երէ Ծաղիկի հաւատակութիւնը ուր եւ է արցելի հանդիպի :
Խաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցելուս հուեր
առանձնութիւնը:

Հանրօնու նիւթեու վերաբետալ յօդուածներ եւ քրիակցու-
թիւններ ևնոհակալութեամբ կ'ընդունուի :

ՀԱՍՑԵ — Ծաղիկի վերաբետալ ամէն ինչ պէ՛ս է ու զիել Պատ-

առարկան Գուառու թիւ կ'առ նէ Յունու Համար, թիւ 14 :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



Մի քանի շաբաթէն պիտի սկսինք մաս առ մաս
հրատարակել «Մեր կարծեցեալ Ազնուականները»
անուն տեղական վէապ մը որ արդիւնք է «Պետիկ»ի
գրչին. Այդ վէապ խիստ գուարճափ եւ հետաքրքրա-
շարժ ըլլալուն, վստահ ենք թէ լաւ ընդունելութիւն
պիտի գտնէ մեր բազմաթիւ ընթերցողներուն կողմա-
նէ :

Դան ուղղուելու Պատ. Տիորինութեան եւ մեղուաջան
Խմբագրութեան, եւ կը մազթենք ի խորոց արտէ թէ
«Ծաղիկ» որ պմնասէր եւ նորածնելութեան մոլի կնկան
մը Մշագգենասին մը սե՛ւ ճակատագիրն ունեցած է ի
սկզբանէ անտի, այս ներկայ նորակազմ ընթացքին մէջ
չնորհէւ իրեն նկատմամբ տարուած հոգածութեան եւ ա-
ջակցութեան թէ՛ Պուսերնակ եւ թէ՛ զաւառացի ժրա-
շան գրիներու նա ծլի ու ծաղկի Հայկական բուրաս-
տանին մէջ յօգուտ ազգային յուսալից գրականութեան
եւ ի պարծանս Հայ Մամոյն եւ կը բաղձամք միանդա-
ման որ իւր հոգեզուարծ ու համոզ հոտով բուրումնե-
րով գայ լնուէլ մեզ որուն մշտական վայելումն մեծ բա-
րեբազութիւնն պիտի համարիմք մեզ համար :

Կարծեմ քանի մը տարիներ կայ որ Պոլսոյ մէջ Ծաղ-
իկ նման երդիմարանական թերթ մը չէր հրատարակուէր
չենք գիտեր թէ ի՞նչու : Այդ համը հոտը յաւէտ ողբաց-
եալ Պարոնեան իր հետ առած տարած էր սեւ գերեզման,
կարծես մեզի գէմ վշտացողի մը պէս, եւ ահա այն օրէն
ի վեր այդ ճիւղը մնացած էր տնմշակ, Ուրախ եմք որ
այսօր «Ծաղիկ» իւր կանոնաւոր ընթացքով եւ ապա-
հովեալ գոյութեամբ կուզայ այդ պակամու լնուէլ իւր հա-
մաս շրջանին մէջ կեզզ Պարոնեան իր ցուրտ շիրմին
տակէն — եթէ ունի — բան մը չպիտի զգայ եւ իւր
հոգւոյն խորէն գէմ «Բարեմաղթանք մը եւ կամ Ապ-
րիք» մը չպիտի՝ արձակէ ի տես «Ծաղիկն» արզիւնաւոր
վեցամսեակին զոր կը տօնենք բարեպատեն զուգաղի-
պութեամբ այս ցնծութեան խորհրդաւոր օրերուն :

Քաղցր է մեզ յուսալ թէ՛ ընթերցակը Հայ հասա-
րակութիւնը որուն օգտին «Ծաղիկ», ի լոյս կը տեսնէ՝
պիտի գիտնայ զնահատել նորա մատուցած եւ մատուցա-
նելիք ծառայութիւններն . որուն ի սրտէ կը բաղձամք .
Պէտք է գիտնալ թէ ծաղիկ մը որչափ ալ ուշաթառամ
ըլլայ, երբ անխնամ կը թողուի, բնականաբար կը թոռմի

ԱՐՁԱԳԱՆԳ ՀԵԼԼԵՍՈՐՈՆՏԵԱՆ ԱՓՈՒՆՔԵՆ

ԿԱՂԱԿԱՆ ԴՉԵԼ ՔԱ

Առ սիրածափի «Ծաղիկ»

Գոհութեամբ սրտի կը նշմարենք նորածիլ «Ծաղիկ»
նոր շրջանին անդրանիկ վեցամսեակին բարեյաջող բոլո-
րումն . չենք կրնար անտարբեր մնալ այս անակնունելի
ուրախառիթ պարագային առջեւ . ուստի իր անշուք
գաւառացի, տրուապ գրասէր եւ ջերմ բարեկամ Հայկա-
կան նորաբոլբոչ Մամոյն, ներկայիւս կուզամք Հելլես-
պոնտեան գեղածիծազ ափունքէն խամնելու մեր պան-
դըխտական տիտուր այլ սրտագին խնդակցութիւններն ,
քաղցրաժամկան գաւառացի համակիրներուն
այն խանգամառ աղաղակներուն որք այսօր բարձրանա-
լով լայնածաւալ թուրքիոյ չորս իսր անկիւններէն կու-

անմիջապէս եւ կը կորսնցնէ իւր կենսաբոյր համն ու հոտն . ուրեմն մեր Մազկին մշտագլաւը պահուիլն ժողովրդեան եւ ընթերցաւէր հասարակութեան ձեռքն է , չենք կարծեր որ այս նորածիլ այլ քաղցրաբոյր «Ծաղկիլին կեանքը այս անդամ ալ կարճատեւ ըլլայ , ինչպէս եղած էր շատ անգամներ , հակառակ մեր ակնկալութեանց :

«Ծաղկիլի մշտագլաւը մնալուն համար ի սրտէ յաջողութիւն մաղթելով եւ նուրիելով իմ ներկայ համեստ կազմագլուխք , կ'ըսեմ Զեզ ց'քաղցր անուութիւն Մազկին անդրամիկ բարեյտչող տարւոյն , որուն անձկանոք կ'սպասէ ու կը բաղձայ :

ՀԱՅԿ ԹԱՅՔԱՍԽՆԵԱՆ

Ծ Յունվար 98. Ի Տարտանէլ
«Անշուք — խրճիթ»

ՅԱՌԱՋ ԹԷ ԵՏ

Ընդհանուր խնդիր մը դարձած՝ ամէն մարդ իրարու կը հարցնէ թէ , յառաջ կ'երթանք կոր թէ ետ :

Ոմանք կրսեն թէ յառաջ , ոմանք ալ ետ , հարկաւ մարդիկ ամէնքն ալ մէկ խելքէ չե՞ն ա , սակայն ասոնց ո՞րն է ճշմարիտը իրենք ալ չեն դիտեր :

Գալով մեղի , մենք սա շատ աղէկ զիտենք թէ մեր այսօրուան վիճակը՝ մեր նախնեաց վիճակին հետ բաղդատելով այնքան յառաջ գացինք որ , աշխարհիս ծայրն համանելուս մատ մը մնացեր է :

Օրինակի համար :

Առաջները մեր մէջ շիտկէ շիտակ հայերէն մաքուր լեզու խօսող մը տեսնէին նէ կոտ Հայր Արսէնն է կըսէին կամ Չամուրծի պատուելին . իսկ հիմա ամէնքնիս ալ այնչափ շատ լեզուներ գիտենք որ , երկու խօսք ըրած տաննիս ուրիշ լեզուէ բառ փոխ կառնենք կոր :

Առաջ աղոյութիւնը մեծ նշանակութիւն ունէր , եւ օլուր օլմազ մարդու աղա չե՞ն ըսեր , իսկ այսօր աղայութիւնը կարեւորութիւնն կորսնցուցած է :

Առաջները իւր մէկ կնիքը չենք չնորհք պահով էրիկ մարզը գովելով բերաննին վրաց չեր իգար , իսկ հիմայ երեք չորս կնիք պահողներուն ալ ևսանկ կընսցի կոր ըսելով զիշեր ցերեկ տունէ տուն կը բանբանն կոր :

Առաջ նոր հարսերը խօսք ընել չգիտնալնուան եօթը տարի կեարոջնուն առջեւը մունջ կը կենացին , իսկ հիմայ ասոնք իրենց կեարոջը նեօպէք չեն թողուր կոր խօսելու :

Առաջները մեր մէջ հարիւր տրամ օղի խմովին զարմանքով կը նայէին , հիմայ խոշոր կալոն մը կը խմեն կոր եւ շ'հ անգամ ըրած չունին :

Առաջ մեր երիտասարդները մինչեւ որ ձեռքով պեսինին չոլորելին ծխախոտ խմելու կամչնալին , իսկ հիմայ փա՛ռք յառաջդիմութեան օրօրոցի մանուկն անգամ ծիծի տեղ աիկարը բերնէն վար ձգած չունի :

Առաջ մեր հարստութիւնը այնքան պղափան բանէ կը բաղկանար որ 80 քէսէլին է տէյի մատով կը ցուցընէին , իսկ այսօր էն չը հաւած հարուստ մէկ ուիսթի նստելուն 40-50 լիրա կուտայ ու բան մ'ալ չիմանար կոր :

Առաջ մեր լրազիրները ժողովրդեան բարոյական խրատներ կուտային , բայց հիմա գրած յոդուածին վնիկիդ ձղէ ուրիշ մը առ ըսելով նոր նոր վարդապետութիւններ կը հանին կոր :

Առաջ պատրիարքարանը որ վարդապետը ուզէր նէ առաջնորդութեան կը խրկէր ու կ'երթային , բայց հիմա ամէնքը մէկանց հիւանդացած Պոլիս թափեցան , «ողը չը գար» կըսին կոր :

Առաջ մայր մը 6-7 զաւակ կրնար մեծցնել , առանց առատայի եւ սիւանայի . բայց հիմա մէկ զաւակը մեծցընելու համար , մէկ տանա , երկու բարամանա , չորս պիպէրոնով հազիւ կրնան կոր մեծցընել :

Վերջապէս աչքերնիդ ո'ր զի գարձնէք ամէն կողմանէ ալ ինքզինքնիս բաւական յառաջ գացած պիտի տեսնէք , եւ այնքան յառաջ որ եթէ պահ մը աչուընիս մեր անցեալ վիճակին վրայ դարցնեմք՝ մնաւ հաւատանիս չը պիտի գայ թէ մենք մեր հայրերուն զաւակներն եղած ըլլանք :

Աս ալ քիչ մը քիչ յառաջաղիմութիւն չէ , այնպէս չէ :

ՏԱՐԵՐՓ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Ի ՊէՏՍ ՆՈՐ ԶԱՐԳԱՑԵԼՈՑ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԼՈՎԱԿՈՒՆՔ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

21. Ուղիղ խօսելու քերականութեան մէջ տեսած ենք որ կան բառեր՝ որք հոլովման մէջ վիրջաւորութիւննին . կը փոխին , կան ալ որ առանց վիրջաւորութիւննին փոխելու , առջեւնին նախսիր առնելով կը հոլովին : Ամուսնութեան բերականութեան մէջ ալ ճիշդ այսպէս կը հոլովին բառերը :

22. Ամուսնութիւնը տասներկու տեսակ հոլովում ունի , որոնց մէկը կանոնաւոր եւ տասնըմէկն անկանոն են :

Կանոնաւոր հոլովում

23. Այն էրիկն ու կնիկն որ առանց իրարմէ հարըստութիւն վնտուելու մի միայն սէր վնտուած են . ու գիմաց գեղեցկութեան հետ բնաւորութեան գեղեցկութիւն ալ վնտուելով իրարու միշտ հաւատարիմ մնացած են ուղղականին վրայ ի մը առնելով կը հոլովին :

Այս հոլովման առակ կ'երթան համեստ աղջիկները , պարկեշտ երիտասարդները , տնտեսագէտ տիկինները , ժուժկալ էրիկներն եւայն :

Անկանոն հոլովմունք

Հողովումն Ա.

24. Այս ամուսնութիւնը՝ որուն ուղղականին մէջ ստակ կայ՝ սեռականին մէջ ստակը կորսուի կը փոխուի :

Ասոր պէս կը հոլովին տգեղ աղջիկները եւ արծաթաէր երիտասարդները :

Հողովումն Բ.

25. Այս ամուսնութիւնը որուն ուղղականին մէջ սէր չկայ՝ սեռականին մէջ կնիկը կը կորսուի եւ տունէն մօրը տունը կը փախչի :

Այս հոլովման տակ կ'երթան այն էրիկ-կնիկները՝ որոնք իրենց ծնողաց բոնութեամբն միայն ամուսնացած են :

Հողովումն Գ.

26. Ամէն աղջիկ՝ որ ուղղականին մէջ 26 տարեկան է. սեռականին մէջ այս քասանեւվեցը՝ տամնեւչորսի փոխուելով կը հոլովին :

Այս հոլովման տակ կ'երթան ամուսնութեան միջնորդ կանանց ձեռքով կատարուած ամուսնութիւնները :

Հողովումն Դ.

27. Ամէն էրիկ որ ուղղականին մէջ քանի մը սիրուհներ կ'ունենայ, սեռականին մէջ կնիկն ալ սիրական մը կ'ունենայ :

Այս հոլովման տակ կ'երթան անբարոյական էրիկներն եւայլն :

Հողովումն Ե.

28. Այս աղջիկներն որք ուղղականին մէջ թուխն, սեռականին մէջ բուտրա քսելով ճերմակի կը փոխուին :

Այս հոլովման տակ կ'երթան այն աղջիկներն որոնք բուտրայի շնորհիւ կրցած են ամուսնանալ :

Հողովումն Զ.

29. Այս կնիկը որ ուղղականին մէջ մէկ սիրական մը ունի՝ սեռականին մէջ մէկ սիրականը երկուքի կը փոխէ էթէ էրիկն չափազանց նախանձու է:

Այս հոլովման տակ կ'երթան նախանձու էրիկներն ու պչրող կնիկներն :

Հողովումն Է.

30. Այս աղջիկներն որք անուս եւ միայն հարուստ են՝ ուղղականին մէջ հարս կ'ըլլան. սեռականին մէջ այս հարսը քառուհին կը փոխն. տրականին մէջ թագուհին բոնաւորի կը փոխն. զործիականին մէջ փորձանիի կը փոխն եւ կոչականին մէջ ո՛վ դժբաղդուրիւն կ'ըլլան :

Հողովումն Ը.

31. Այս էրիկն որ հարստութեան ուղղականին մէջ բարի էր՝ անանկութեան սեռականին մէջ չարի կը փոխսուի :

Այս հոլովման տակ կ'երթան ստակի համար էրիկն սիրող կնիկները :

Հողովումն Թ.

32. Այս կնիկն որ ուղղականին մէջ երկու սիրա-

կան ունի՝ սեռականին մէջ մէկ էրիկն կը կորանցնէ եւ անոր տեղ երեք սիրական ունենալով ամուսինէն կը բաժնըւի :

Այս հոլովման տակ կ'երթան անբարոյական կնիկները՝
Հողովումն Ժ.

33. Այս աղջիկներն որք ընդհանրապէս ուղղականին մէջ հրիշտակ են՝ սեռականի մէջ Սաղայէլի կը փոխուին :

Այս հոլովման տակ կ'երթան մէջ թաղերու աղջիկները :

Հողովումն ԺԱ.

34. Այս երիտասարդներն որ ուղղականին մէջ քսան տարեկան են, սեռականին մէջ վամթանի կը փոխուին, եթէ կնիկներն չույլ ըլլայ. տրականի մէջ բանտի կը փոխուին եւ կոչականի մէջ գերեզմանի կը փոխ(աղջ)ուին :

Այս հոլովման տակ կ'երթան արդի ամուսնութեանց հարիւրին իննառուն եւ ինն . . .

ՅԱՅԻՑ

ՊԱՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յայտնի է ընթերցողաց որ Եւրոպա մեղի մնոր հին պարերը մոռցնել տուած եւ անոր տեղ գարուս պահանջմանցն համեմատ նորեր աւանդած է :

Օրինակի համար. հին պարերու մէջ իգական սեռը արանց հետ եւ արական սեռը կանանց հետ գործ չունէր, մինչդեռ նոր պարերու օրէնքն է երկու սեռի ներկայութիւնը :

Հին գարերու մէջ ձեռք ձեռքի բռնած շրջանակ մը կը կազմէին, կամ ձեռքեր ուսերու վրայ դրած եւ կամ թեւը ընկերոջ անութիւն (լսոլթուխին) անցուցած կը ներկայանացին. մինչդեռ հիմա իգական սեռը արական սեռին հետ կարծես երկար ժամանակ իրարմէ բացակայ մնալէ ետքը՝ նոր իրար տեսած զիրկընդիմառն կ'ըլլան կոր :

Հին ժամանակները քով քովի կրնային իրարու մօտենալ, մինչդեռ հիմա երես երեսի :

Հին ատենները հարիւր ժամու մէջ քայլ մը կ'առնէին, չենք ուրանար թէ ասի չափազանց դանդաղութիւն է, հիմա ժամուան մը մէջ հարիւր քայլ կառնեն կոր, այս ալ թեթեսողիկութիւն է :

Ասոր հաշիւը ընթերցողաց թողլով, եւ եթէ պահանջող մըլլայ՝ տալու խոստմամբ զանց կընենք առ այժմ այդ մասին երկարօրէն խօսիլ :

Հին ատենները ծունկ կը կոտրէին, հիմա թեւ կամ թէլ կը կոտրեն կոր :

Առաջ պարողք այնչափ կը հոգնէին որ արիւն քըրտինք կը թափէին, հիմա կարմիր եւ ճերմակ փուտրա կը թափէին կոր :

Առաջ պարերու ատեն իրարու հետ չէին խօսակցեր, հիմա գաղտուկ կը բարան կոր :

Առաջ մէկը իւր չը ճանչցած օրիորդին կամ տիկնունը հետ չէր տեսնուէր ու չէր խօսեր, հիմա մէջքէն կը բռնէ ու. կը ցատկէ կոր:

Այս ամէն բաներէն շատ մը չարիքներ ծագելը տեսնելով՝ առնոց առաջքն առնելու համար ի պէտու Հայ սերնդեան պարի կանոնագրութեան մը խիստ սափաղական ըլլալը յայտնի է, ուստի պէտք եղաւ մեզ ի սէր սիրեցեալ ազդի մերոյ պարի կանոնագրութիւն մը խըմբագրել, որպէս զի ամէն Հայ տան մէջ կախուի եւ պարող անոր համեմատ վարուին:

Յ0Դ. Ա.— Ամէն երիտասարդ իր քրոջը կամ սիրունոյն կամ նշանածին հետ (եթէ ունի), եւ կամ մօր ազգականներէն մէկուն կնկանը կամ աղջկանը հետ ազատ է պարելու:

Յ0Դ. Բ.— Երիտասարդ մը իր չը ճանչցած մէկ աղջկան հետ եթէ պարել ուզէ նախ եւ առաջ պարել ուզելուն պատճառներն յայտնելու պարտաւոր է, որովհետեւ եթէ ամէն կանոն իր բացառութիւնն ունի, հարկու ամէն բացառութիւն ալ մէյմէկ պատճառ ունի:

Յ0Դ. Գ.— Այն երիտասարդն որ իննօյքի մը մէջ ո՛չ քոյր ունի եւ ո՛չ մայր, պարելու իրաւունքէն զուրկ է:

Յ0Դ. Դ.— Երբ իրիտասարդ մը իր քիչ մը ճանչցած աղջկան հետ պարել կուզէ, պարտաւոր է այդ աղջրկան հօրմէն կամ եղբօրմէն, երկուքէն ո՞րն որ աւելի հախանձու է, անկից հրաման առնել ու ետքը պարել:

Յ0Դ. Ե.— Երբ Տիկին մը մէկու մը հետ պարել ուզէ, պարտաւոր է իւր ամուսնէն հրաման առնել, ամուսնը ծեր կամ ընկերութիւնն բացակայ եղած ատենը կին մը պարելու իրաւունք չունի, եւ այն կինն որ ասանկ պարագոյից մէջ (բաց ՚ի եղբօրմէն) ուրիշի մը հետ պարելու կ'ելնէ, պատուաւորութեան տիտղոսին կը վեսէ:

Յ0Դ. Զ.— Պարի միջոցին երկու պարտզներու մէջ փափուքն խստիւ արզիւեալ է:

Յ0Դ. Է.— Պարի միջոցին պարողաց երեսներն իրարմէ հեռու ըլլալու են, որպէս զի իրարու քսուելով՝ աղջկան երեսի փուտրաներն երիտասարդին երեսը չը փոխադրուին:

Յ0Դ. Ը.— Պարի միջոցին զիրար հրեն թէ՛ արզիւեալ է եւ թէ անքաղաքավարութիւն. սրանը որչափ պարող կրնայ տանիլ՝ այնչափ հոգի պարելու է:

Յ0Դ. Թ.— Քատրիլի մէջ զործածուած նորամուածեւերն իսպատ կը մերժուին:

Յ0Դ. Ժ.— Ոչ ոք իրաւունք ունի յառաջազոյն իրեն վիզավի պատրաստել, զիզուածն որն որ յառաջ բերէ այն վիզավի կը լայ, (Այս կէտին ուշագրութիւն ընելու է, կ'աղաւեմ):

Յ0Դ. ԺԱ.— Երիտասարդներն աղջկանց մէջքէն բըռնած ժամանակնին զզուշութիւն ընելու են որ չցաւցունեն:

Նմանապէս ձեռուընին բրնած ժամանակին ալ զզուշանալու են, ո՛վ որ այս զզուշութիւններն չըներ, ընկերութիւնն զուրս կը վանառի արժանավայել խոյտառակութեամբ:

Յ0Դ. ԺԲ.— Ներկայ կանոնադրութիւնն վերաբնե-

մի ըլլալու պայմանաւ այս թուականէս մինչեւ երկու տարի պիտի գործադրուի:

Կանոնագրութեանս դէմ մեղանչողներն, Մադիկիս մէջ հրապարակաւ պիտի պատժուին եւ տամա ընտրելու իրաւունքէն խսպատ պիտի զրկուին:

Տուեալ ՚ի Խմբագրատան
Մադիկ ազգօգուտ լրագրոյ
ի 11 Յունիկար 1898 տարւոյ, Կ. Պոլիս

ՄԻՒՍԻՒ ԿՂԷԿՈՒԱՂ ՍԱԳՍԻ

(Նարունակութիւն 26 թիւն եւ վերջ)

Բնթերցողք անշուշտ կը յիշեն այս անունը:

Երէկ, օր տանջանաց, օր փորձանաց, գրասենեկիս մէջ նստած, գրիչը ձեռքս, հազիւ սկսած էի ևաւուր պատշաճիս մը երբ սենեկիս զուուը բացուելով (առանց թթք թթքի) Մ. Սագսին ներս մտաւ եւ ձեռքք ինձ երկնցնելով ւղօն ֆէթ, մօն ամին պուաց, Ձեռքս տուի իրեն, բայց շատ զալացի, քիչ մնաց որ տեղէն պիտի համէք:

— Գիտէ՞ք ինչու համազ եկայ:

— Ոչ: Կ'աղաջնմ սակայն որ ըսելիքնիդ շուտով լմացնէք, վասնզի հազարաւոր ընթերցողներ (օթլախճիներն ալ միասին հաշուելով) վաղուան Մադիկին կ'ապասնեն:

— Ալօն տօն, այս շարթու չէք համեղ, եւ գալ շարթու առուպէ կը հղատաղակէք: Տայէօզ, սքանչելի աղթիքը մը սեղած եմ, եւ ձեզի ֆավէօզ (շնորհ ըսել կ'ուզէ) մը ըղած ըլլալու համազ Մադիկի մէջ հղատաղակել կ'ուզեմ:

— Շնորհակալ եմ, բայց այս շարթուան համար տեղ չկայ: Ձեր յօդուածը հոս ձգեցէք, նկատի կտուուննք եւ եթէ հրատարակելի բան մընէ ամենայն սիրով:

— Ինչպէ՞ս, զալ շարթուան համազ շատ ուշ է, վասնզի ձննղեան աղթիւ ըղած այցելութիւննեզս նկազագզած եմ, ող սքանչելի է, սէ սիւբէզպ մօն չէղ:

Համբերութիւնն ճամբայ ելած էր դէպ ի հատնուած եւ արդէն հասած էր:

— Կը խնդրեմ որ յօդուածնիդ ձգէք ու մեկնիք:

— Զիս կը նախատէ՞ք, դո՞ւք, պազզ խմբագիդ մը, զիս նախատէ՞ք բայց զիացէք ող այս ինդիզը տիւելո մը կղնայ միայն կազզագզել, հետեւաբաղ ահա ձեղնոցս ձեղ եղեսին կը նետեմ, եւ վազն ալ վկանեզս կը նողիսմ:

Զէր մեկներ սակայն: Ձեռնոցին նայեցայ որ նոր էր, մէջն ալ մուշտակով ծածկուած: Մաքէս ըսի որ ապրեօք մէյ մընալ նախատեմ նէ միւս ձեռնոցն ալ երեսիս կը նետէ՞ս: Մտածածիս պէս ալ ըրի յաջողեցայ: Ասանկ նեղ ատեններու ալ զոյգ մը ձեռնոց նուէր ստանալը շատ անուշ բան է եղեր. բայց երեսներդ քիչ մը կը կսկծայ եղեր, թէհ, տեւական չէ եա այդ կսկծը: Ետիւենական կսկծով ընկերացող ի՞նչ նուէրներ կան

տրուած։ Այս խորհրդածութեամբ ձեւնոցները կամաց կամաց գրապանո դրի։

Ճիշդ այս պահուն 60 ամեայ կին մը, զլուխը ևօսնա փօրօղով մը, կոնակը սեւ շալով եւ ձեռքն ալ հովանուցով մը ներս մտաւ։

— Պարեւ ձեզ, Ծաղիկ աղան հո՞ս է։

— Զէ տուտու, ի՞նչ կայ քի։

— Եօլիւշիւդ քէօոր կայ, ի՞նչ պիտի ըլլայ քի, էս հալիսուն մասխառան եմ քի ինծի զաղէթան կ'անցունէք կոր։

Հը՛մ, առ քեզի փորձանք մը եւս, ըսի ինքնիրենս,

— Զինորաթես, ի՞նչ մունձ ու կուռ կեցեր ես։

— Ո՛վ ես զուն, անունդ ի՞նչ է, ինչ ըսել կուզես կոր, մէյ մը լաւ մը հասկցուր ինքինքդ, պատրաստ եմ օրինաւոր կերպով պատասխան տալու։

— Ինծի նայէ, անանկ կուարառածա խորաթելովդ ինծի չես կրնար եէնմիշ ըներ, ինչ կուզես ինծի պէս խուզի կնիկէն, Սերքիս զաղէթա կարդացեր է եղեր տէ էս ալ մտիկ էմ ըրեր աէ, պաներ մընեմ ըսեր աէ, քա տուն իմ տունիս խորաթային ի՞նչ կը խառնուիս, հեռուներ ըլլայ, ուրկէց ալ եկաք մտիկ ըրիք, ըսես, հէ։

Եւ ինքնիրենս կը խորհէի թէ «Նար. 26 թիւէն եւ փրջ» յօդուածը որ շարուած էր զալ շաբթուա՞ն ձգեմ թէ ոչ։ Երբ խաթունը նորէն սկսաւ։

— Տահա առ չես լմնցուցեր տէ տէվամ պիտի ընես եղեր, հատտ ունիս նէ. եանի չիկոյ փորձանքներ կը պանամ զլխուգ օր։

— Ինծի նայէ տուտու.։

— Ես տուտու չեմ, պերանդ քեզի ժողվէ։

— Ինչ որ է հանըմ, մենք յանցանք չունինք. մենք Ազմօտէ անունով մէկը ունինք, այլըն, հաֆթալընի չենք իտար անոր ամա, իշտէ պազի պազի կուզայ մեզի ասանկ հավատիսներ կը պերէ նէ մենք ալ քանի մը բարա պախչի կուտանք, ինչ ընենք փուխարէ մարդ է. Կէշնմիշ պիտի ըլլայ մեզք է։

— Քա փէք աղէկ ամա, առ մարդը ուրկէց մտիկ ըրեր է մեզի, մենք էտէւի օտան նստեր էինք, ճամերն ալ սըխը սըխը կոց։

— Հա, ան մարդը հիշ չտեսնուիր, ան կուզայ օտայիդ մէջ կը նստի, քեզի կը տեսնայ ամա զուն անիկա չես տեսնար։

— Պայ մեղքիս, իրա՞ւ ատանկ է։

— Հասպա։

— Եյ անանկ է նէ մեր դիմացի տունը խրկեցէք գիշեր մը հոնտեզէն ձեզի էփէյիծէ, ամա էփէյիծէ հավատիսներ կը պերէ։

— Որի՞ն տունն է քի ատիկա։

— Լիւփիէնք կ'ըսուին. մեր մահալէն կիտի՞ս։

— Զէ։

— Արտը պօզուք մահալէսին է մերը, հոն լիւփիէնք որի հարցունես նէ թարիքը կուտան։ Զմոռնաս ամա եավրում, թէք խօշ պաներ պիտի զայ անկաճդ, պարէ հավատիս մը կրես օր տէյմիշ ընէ։ Մհամ պարով եավրում։

— Երթաք բարով։

է, պիէն, ժը վուզ աթան։

Վայ անպիտան, աս փորձանքը հոս է եղեր զեռ։

Զանգակը զարկի, բեռնակիրը վեր կանչել տուի եւ ականջն ի վար կտրուկ հրաման մը տալէս վերջը տեղս նստեցա։

— Կէլ կէօրէք, մուշու, աշաղըտա պէքլէյօր սէնի պիրիսի։

— Ալէ-վուզ-ան, էսրէս տը.։

— Հէլէ պախ չունզա ըսիլով թուզթի ծրար մը գրկելու պէս մեր միւսի կ'զէկուազը գրկեց ու սաքռէ պլէօ, ֆիշթուր, լէսսէ մուտու եւ զեռ խել մը ֆրէնկեամուզ զրուցատրութիւններու շարքով մը գուրս տարաւ սենեակէս։

Մի քանի վայրիկեան վերջը բեռնակիրը սենեակս գալով «Էլափիլէնլէրի իսթէյը» ըսաւ։

Զեռնոցները գրպանէս հանելով ես տուի, վախնալով որ ուրիշ օր մընալ նորէն կուզայ ձեռնոցները ու զելու համար։

Եւ ահա վերեւ պատմած պատմառներուս համար ռաւուր պատշաճիս չուրը ինկաւ։

Ներողութիւն։

ԼՐԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ «ՄՈՒԹ ԽԱԻԵՐՈՒ ՄԷԶ»

(Նարունակութիւն 26 թիւէն եւ վերջ)

— Մտիկ կնե՞ս կոր։

— Կարդա եավրում

— Մարկոս եպիսկոպոս երէկ Պատղիարքարան գնաց, եւ երեկոյին տուն վերադարձա։

— Եյ գա՛, հէլպէթ, եպիսկոպոս եղողը հէլպէթ Պատղիարքարան կ'երթայ, իրիկունն ալ տունը կ'տառնայ, աս ալ կրելու հավատի՞ս մըն է։

— Սամաթիոյ առժամեայ թազ. խորհուրդը հրաժարելու միաք ունի, Բայց թաղեցւոց մեծամասնութիւնը ինզրած է օր շարունակէ կատարել իւր պաշտօնն։

— Որո՞ն հոգուն համար։

— Ինչը։

— Պաշտօն կատարէ ըսիր նէ։

— Զէ ճանըմ սանքի թաղականները գործէ քաշուիլ ուզեր են տէ, թաղեցինները թող չին ատի կոր եղեր։

— Հախ ունին հատա, նայինք անոնց տեղը կափքները տահա՞ չնորհքով պիտի ըլլամ, ով կիտէ։

— Տ. Պետրոս եպիսկոպոս սնցեալ օր քարոզ խօսեցաւ Ս. Դէորդ եկեղեցւոյ մէջ, Բաղմաթիւ ունկնդիրը ներկայ էին։

— Ատո՞ր եպիսկոպոսն է քի. հրաշագո՞րծն է։

— Զէ, Սվազի առաջնորդն էր։

— Ան չէ ամա, Սերքիս. հրաշագործ եպիսկոպոս մը կար նէ, ո՞ւր է անիկայ հիմակ քի։

— Օ՛ Հօ՛, կալը մօտեցաւ. շատո՞նց վախճանեցաւ։

— Քա՛ ինչ կըսէ , խասլար պիէշ չեմ : Անվկայ մէկ սառափէ մը առնելիք ունէր , չիյտեմ քանի հազար զուրուտ տէ , չկրցաւ առեր էր , սօղրամ լէք շատ Տահատ է ըրեր քիմ սանկ հրաշք մը կործէ տէ բարաները առնէ տէյի ամա , ը՛ , ը , շիտակը իմացայ նէ շաշմիչներ եղայ քի , քա ան քի ատխտար հրաշքներ կրնար կոր ընել նէ բարաներուն համար ...

— Է՛յ , ճանըմ , աղնատըգ , ատ ըսածներդ խաղէթայէն դուրս բաներ են մտիկ ըրէ : « Հանդուցեալ Տիկին Ք...ի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի մէկ օսմ . ոսկի նուիրած է Հիւանդանացին՝ Գրիգոր էֆ.ի Գրիգորեան :

— Ատիկայ բէք չհասկցայ :

— Վախիթ մնէ քի մեռելին պսակ չեն խրկեր կոր , անոր տեղը հիւանդանոցին բարա կուտան կոր :

— Էյ նէ իսէ , հէլէ ատամ ախըլլը պան մը կարգացիր : Ան չէ ամա Փրկիչնիս ի՞նչ ճուրի վրայ է . պան մը գրե՞ր է անոր վրայօքը , զէրէ բէք խառմախառը պաներ կը գուրցեն կոր աս տուա :

— Զէ , բան մը չէ գրեր :

— Տեսա՞ր մի կրելիք պանը իշտէ . ան ալ չէ կրեր . Քա՛ ան ինչէնի պաներ պատմեց քովինին էրիկը ամա . ես բէք շատը կիտէյի : Անցածները տալզս տղան Փըրկիչը տրեր էին տէ ալ զավալլը չօճուխին չքաշածը չը մնաց , տառ փախաւ տղան տուն եկաւ . անանկ պաներ ալ պատմեց քի , Փրկիչնի մէջը ան քանի մը եռումուռմախս սուրաթլլ մարդկիներ կան եղեր , անոնք մէյ մը տուրս հանելու է . հասկցա՞ր . — Ալ անոնց ըրածները , ալ չօճուխներուն քաշածները միան Տէրը կիտէ : Տահա անցածնոր էր . . .

— Քա պու նէ չէնեէ տիր սէնին չէնեէն , կօգտէ սէ . խազէթա մտիկ պիտի ընես , չէ նէ մասալ պիտի գուրցես :

— Ի՞նչ մասալի , ասոնք մասալ չեն , խելքդ կլօխդ ժողուէ :

— Բէք աղէկ , բէք աղէկ , սօղրա պօլ մը կը խօրաթենք : Ներքին լուրեր :

— Ներքին լուրե՞րը ինչ է :

— Իշտէ Ստանալի հավատիս կուզէիր կոր , մտիկ ըրէ :

« Պանք Օթօմանի Պօլսոյ եւ Ղալաթիոյ գրասենեակներն յառաջիկայ երեքարթի գոց պիտի մնան Յունաց Մկրտութեան տօնին պատճառաւ : »

— Աս որի՞ն մաղազան է քի .

— Մաղազա չէ , պանքա է , հոռոմներուն Մկրտութիւն է տէյի գոց սիտի ըլլայ եղեր գալ երեքարթի :

— Ան օրը մեզի ալ Ծունունդ է , անա՞նկ չէ :

— Հա ,

— Բաել է քի հոռոմներուն մկրտութիւն ըլլար նէ պիզի մալտոն սայմայաճապլար :

« Առջի գիշեր ժամը Դին ատենները Բերայի մէջ տուն մը այրեցաւ , կըսուի թէ այս այրած տունը ապահովուած էր (եանի սիւկիւթալը) բարավէրմէզիօն ընկերութեան , 500 Օսմ . ոսկւոյ : »

— Սաղլըս սէլամէթով ատ սիւկիւրթաները Ստան-

պօլ կային : Ամենուն փորը սատանան խօթեցին . փարավաստկին պիտի տէյի , հառը զըսրդ կրակ , կրակ կ'ըլլայ : Զիյտեմ եավրում , առ Փուէնկներուն պանին խելքըս չհամնիր կոր :

— Է՛յ , Մարիկըս արթրիս պան մը չկայ :

— Սանքի կարդացածներդ բէք խըյախ պաներ էին տէ , քա առ խազկթային ինչին բարա կուտաս տէ կը կարգաս , հայտէ , տղաս . ելլենք պառկինք . կեցիր ազօթքս ընեմ տէ , հազըր օտան տաք իքէն , ետքը կերթանք :

ԹԵՏԻԿ

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Խւրաքանչիւր քսան եւ չորս ժամուան մէջ Լօնուայէն 2200 թռէններ կը մեկնին :

Զի մը կարող է առանց ոնունդի ապրիլ 25 օր , միայն ջուր խմելով :

Տարօրինակ բժշկութիւն մը . — Աւստրալիոյ մէջ պանդոկ մը կայ ուր ոխւմաքիզն ունեցողները միայն կը յաճախեն : Երբ կէտ (Պալէնա) մը բռնուի , անմիջապէս այդ պանդոկը կը ասրուի եւ մարմնոյն մի քանի մասերուն վրայ խորունկ փոսեր կը բացուին : Այդ փոսերուն մէջ հիւանդաները կը պառկին , մերկ , եւ երկու ժամ վերջը գուրս կ'ելլնն . . . բժշկուած :

Խիւմաթիզմ ո՞վ ունի :

Ատամնարոյմներէն շատերուն շինած կեղծ ակուներն յախճապակիէնն , որ շատ աւելի զիմացկուն է քան թէ ուրիշ ո՞ւ է նիւթ մը այդ ծամող գործիներուն համար :

Աշխարհիս ամենէն հարուստ անհատներն ան , Ռիլերմ Ասթոռ , 30 միլիօն անգզ . ոսկի , ձօն Ռոքֆէլլը՝ 18 միլիօն , Քոռնելիուս Վանտէւպիլթ՝ 18 միլիօն , Ռուիլերմ Վանտէւպիլթ՝ 16 միլիօն , Ռուէթմինսթէրի դուքսը՝ 16 միլիօն , ձօն ձագօպ Ասթոռ՝ 16 միլիօն :

Գերմանացի բժիշկ մը կ'ըսէ թէ՝ մարդուս զէմքին երկու կողմերը իրարու չեն նմանիր : Հինգ հոգիչն երկուքին աչքերը մէկ գծի վրայ չեն . աչքերէն միւսէն աւելի զօրաւոր է , եւ ընդհանրապէս աջ կողմի ականջը՝ ձախ կողմինէն բարձր է :

Ուռուսիոյ Նիքոլա Ա. կայսեր ատեն Մատթինէֆ առնունով կատակերգակ մը կար, որ ուրիշներու նմանութիւնը այն աստիճան ճշգիւ կը կատարէր որ Զարն իսկ յաճախ իւր ներկայութեան կը կոչէր զինք եւ կը զուարձանար:

Օր մը Մատթինէֆ, կայսեր Անձնական գանձուն նախարարին տունը դժնուած եւ կատակներ ընելու պահուն, յանկարծ Նիքոլա կայսրը սենեակէն ներս կը մշտնէ: Շփոթում, իրարանցում, ի՞նչ ընեն, ինչպէս ներողութիւն խնդրեն: Վերջապէս կայսրը կը հանդարտեցնէ զիրենք, եւ Մատթինէֆի ողջելով իր խօսքը «կը ներեւմ քեզի, եթէ Պ. նախարարին նմանութիւնը (թափալիթ) ընես»: Մատթինէֆ այնչափ ճշգիւ կը կատարէ այս գերը որ Զարը իւր չափազանց խնդալէն կուշտերը կը բռնէ, ու կը ներէ»:

ԶՈՒՄՐՃԱԼԻՔ

Մայրը . — Անժէլ պառկելու ատենդէ, զիշեր բարի ըսէ մատմազէլին եւ երեսներն ալ համրուրէ:

Անժէլ . — (10 տարեկան) Զէ մայրիկ, չնմ ուզեր պազնել մատմազէլը,

Մայրը . — Ինչո՞ւ:

Անժէլ . — Որովհետեւ զինքը պատնողին ապուակ կը զարնէ: Հայրիկիս հարցուր անիկայ աղէկ զիտէ:

* * *

Ուսուցիչը . — (Աշխարհագրութեան դասի ատեն) Ուռուսիա Սեւ ծովու վրայ քանի՞ նաւահանգիստ ունի:

Աշակերտը . — Վեց հատ:

Ուսուցիչը . — Համբէ նայիմ:

Աշակերտը . — Մէկ, երկու, երեք, չորս, հինգ վեց:

* * *

Երկու նշանածներու մէջ:

Անժէլ . — Ա՛ն, Տիրան, հայրս սնանկացա՞ւ...

Տիրան . — Թո՛ք քէնտիսի, ես քեզի չէի՞ ըսեր որ ձեռքէն եկածը պիտի ընէ որպէս զի իրարու հետ չամուսնամամք:

* * *

Միշտ ըսէ կնոջ մը թէ ետեւէ կ'երիտասարդանայ եւ կը գեղեցկանայ: Գիտէ թէ սուտ կը խօսիս կոր, բայց «քէփը» կուգայ:

* * *

Երկու տարի առաջ Բարիկի մէջ աղքատաց օգնելու նպատակաւ պազառ մը կազմակերպուած էր: Պ. Ժ. առ Ռոջիտ պատմամամբ հոնիկ անցած ատեն, զուոը կեցող

մի քանի օրիորդներ, որք կազմակերպիչ մարմնոյ անդամներն էին, ժպտուն դէմքով՝ միլիօնատէրը ներս հըրաւիրեցին:

Պ. առ Ռոջիտ (ներս մանելով) — ինչ ծառայութիւն կրնամ ընել ձեզ:

Օրիորդներէն մին: — Ա՛ն, պառոն, ձեր ձեռագիրը կ'ուզենք:

Ռոջիտ . — Լաւ. բայց սկայմանաւ որ դուք ալ պարագային յարմար բան մը զրէք: Դուք զրեցէք եւ ես ալ կը ստորագրեմ, աւելի լաւ չըլլա՞ր:

Օրիորդը առանց վարաներու, թուղթի մը վրայ սատողերը գրեց: «Աղքատաց օգնելու համար կազմակերպուած... Պազառին տասը հազար ֆռանք կուտամ»:

Պ. առ Ռոջիտ իսկոյն ստորագրեց եւ վճարուեցաւ:

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի Ա. Սինօղի կողմէ Ա. Պատրիարքին զարնուած հետազիր մը բոլորովին կը հերքէ էջմիածնայ գանձարանին մէջ պատահած գողութիւնը որ ասկէ առաջ Բիւզանդիոն իր Դաւրէժի թղթակցէն առնելով զրած էր:

Հինգչարթի օր Ա. Պատրիարքը չկրցաւ Պատրիարքարան երթալ եւ զրաղեցաւ իր բնակարանին մէջ: Ն. Արբազնութիւնն հեռազիր մ'ուղղեց յէջմիածին, չնորհաւորելով Ամենայն Հայոց Ա. Հայրապետին անուան անախմբութիւնը:

— Երէկ Քաղ. Ժողովը նիստ ըրաւ Ղալաթիոյ Խորհրդարանը նախազահութեամբ Ա. Պատրիարք Հօր:

Ա. Պատրիարք Հայրը Հնորհաւորական այցաքարտեր զրկեց, Տ. Յովհաննէս Խաչակիր Աւագ. քահանայ Մկրեհանի, Նուրիսան Վանմ. Յովհաննէս Էֆէնակի, Թորոսեան Յովհաննէս Զիրակ Էֆէնտիի, իրենց անուան տօնախմբութեամն առթիւ:

— Սեւ ծովու լրաբեր ուռուերէն թերթը կը պատմէ թէ մի քանի ամիս առաջ Պաթումի գործարանի մը մէջ ծառայութեան մտեր է Թուրքիայէն եկած երիտասարդ գաղթական մը, որ օրինակիր աշխատող մ'էր, բարերարոյ համեստ, ոգելից ըմպելիք բերանը չէր դներ ու չէր ծիւէր: Օրին մէկը պատահմամբ կ'իմացուի թէ այս երիտասարդ աղջիկ մ'է էրիկ մուրդու հագուստով: Հարցաքննուելով, կ'պատասխանէ թէ մինակ ճանբորդելու հարկադրուած ըլլալով, աւելի զիւրութեան համար առնական տարագ հուզած էր, եւ Պաթում գալէ ետքն, իմանալով որ այրերը կիներէն աւելի զիւրաւ գործ կը դանեն, հագուստը չէր փոխած: Դործարանին կառավարիչն այս աղջիկն իւր քով ատեր է իրիւր տան սպասուհի, բայց նա այնքան վարժուած էր տափատին ու բաճկոնին, որ չոչազգեստ եւ չփակ չուզեր կրել:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դասախոսող ինչպէս նաեւ առևտրական հրապարակին վրայ երկարատեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր տնձ մը, Անգլիարէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տոմարակալութեան գործնական դասեր տալու պատրաստ է: Դիմել խմբազրատունս:

ԾԵԾՈՒԱԾ ԶՈՒՏ ԽԱՀՈՒԵ

Թիթեղեայ տուփի մէջ. 250 կրմ. 3 $\frac{1}{2}$ դր.

» » » 125 » 1 $\frac{3}{4}$ »

Աղյատները մի մոռնաֆ

Արօի առաջին տեսակէ սոյն խաճվէն տուփերու մէջ զրուած կը ծախուի ի նպաստ Ս. Յակոբայ Հիւանդանոցին, ուրկէ գոյացած հասոյթով հարիւրաւոր աղքատներ եւ անոք մանուկներ պիտի խնամուին, հետեւարար ամէն ոք այս խաճվէն զնելով, աման եւ աղէկ տեսակ խաճվէ առած ըլլալէ զատ, աղքատներուն եւ հրանդանոցին օգնութիւն մըն ալ ըրած պիտի ըլլայ:

Կեզրոնատեղին է, Ղալաթիա, Եէնի ճամփ ճատուքի, Զինձիրլի խանին կից, թիւ 70. ուր պէտք է զիմել, անկասկած ըլլալու համար:

Կը ծախուի նաեւ հետեւալ խաճութները եւ ուրիշ ծխալաճառներու եւ մանրավաճառներու քով:

Բերա, Շիատի ճամբան 136 եւ 54 թիւ - շաքարավաճառ Սարիմ աղայի խաճութները:

Բանկալթի, մանրավաճառ Ա. Ֆ. Մ. Խ. Գրիգոր աղայի խաճութը:

Օրթաքէօյ, Քէթէնեան Վիշէն աղայի խաճութը:

Ա. Զ. Գ. Ա. Ց. Ի. Հ. Ա. Ա. Գ. Ա. Ց. Ո. Ց. Ո. Ց.

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ 1898 ՏԱՐԻՈՅՑ

Յօրինեալ ՚ի Մարումք Յովսէփեանէ:

ՍԵՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. Փ. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԵԱՆ

(ՆԱԽԱԿԱՆ ՊԱՐԴԱՏԱՏԵՍՈՒ ՏՊԱՐԱԾՈՒ)

ԳԻՆ 1 ԴՐՈՒՅ

Սուրբ Փրկչեան Ազգային Հիւանդանոցիս ուեպհականութիւնն եղող սոյն Օրացոյցն այս տարի ժամանակէն առաջ հրապարակ համուած է ընտիր թղթի վրայ մաքուր տպագրութեամբ, որպէս զի Արգոյ Հասարակութիւնն մանաւանդ հեռաւոր գաւառոց աղքայինք կարենան ժամանակին պատրաստ ունինալ զայն: Ընդարձակին եւս քիչ օրէն պիտի հրատարակուի ճոխ պարունակութեամբ:

Հոգաբարձութիւնս մեծ յօյս ունի որ Պատուարժան Հասարակութեան ամեն մի անհատ նկատողութեան առնելով Հիւանդանոցիս նիւթական եւ դրամական ներկայ կացութիւնն ու Պատուարից հազարէ աւելի ստուար թիւն, պիտի փափաքի նուէր մ'ըներ նոյն հասաւառւթեան գոնէ մէկ մէկ հաս Օրացոյց զնելով:

Ազգայինք կարող են մէկ Օրացոյցի գնով նշանաւոր նպաստ մ'ըրած ըլլալ, երբ իւրաքանչիւր ոք փութալ այդ փոքրիկ նուէրն զանց չընել:

ՀՈՆԿ - ՔՈՆԿ - ՍԼԵՅ.Ս.Ն - Կ. ՊՈԼ.Ի.Ս

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒԻՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղալ սկի խանի դրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ:

Տէրութեան ամէն կողմերը:

Գաւառաց ապսպրանքները

փութով եւ խնամով կը գոր-

ծաղրութին: Զինական, Հնդիկ,

Ճավայի եւ Աէյլտնի ընտրե-

լագոյն թէյք, ուղղակի բեր-

ուած հոս: Թէյի նոր հունձքն

սկսած է գալ: Զգուշացէք

սոյն վաճառանիշին կեղծե-

րէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ Եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ առու-
րագրութիւնը:

Գ. Բ. Պ. Ա. Ն. Ի

ՅՈՒՇԱՏԵՏՐ - ՕՐԱՑՈՅՑ

1898

Ի վաճառ ելած է հետեւեալ գներով:

Հնափիր լայթակաղմ 2 $\frac{1}{2}$ գահեկան:

Նոյնը ոսկեզօծ ճպանով 4 գահեկան:

» շակոէն եւ մատիառվ 7 $\frac{1}{2}$:

» ընտիր թղթի վրայ տապուած 15:

Կեզրոնատեղիք՝ Սուլթան Համամ Պաղտատլեան գրա-
տուն թիւ 14 եւ Զ. Թորոսեան գրատուն Վալիսէ խան
թիւ 16:

Կը գտնուի Բերա Հայ ծխավաճառաց քով, Կալաթա
վոյրի եւ Ռոմանի թղթավաճառանոցը, եւ Պոլիս
գրավաճառաց քով:

Արտօնացր Ա. ՍՈ.ԲՈ.ՑԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԵԱՆ

(ՆԱԽԱԿԱՆ ՊԱՐԴԱՏԱՏԵՍՈՒ ՏՊԱՐԱԾՈՒ)

Կ. Պալիս, Պալրան Համայ 14.